TUMO
CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES

# #TUMO4Artsakh**Teens**

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## *ՀԲԸՄ (AGBU)*

Կլաուդիա Նազարյան բժշկական կենտրոնում ձևավորվում են «Մենք միասին ենք» հոգեբանական աջակցության խմբեր մեծերի և երեխաների համար: Հոգեբանական աջակցության խմբերում անցկացվելու են թրեյնինգներ և վերականգնողական հոգեբանական աշխատանքներ:

Հոգեբանական խմբերի նպատակներն են.

- Մեծերի խումբ՝ տագնապային խանգարումների, վախերի, անքնության, նյարդային խանգարումների, խուճապի, դեպրեսիայի, հետտրավմատիկ սինդրոմների վերացում:
- Երեխաների խումբ՝ էմոցիոնալ ինտելեկտի խանգարում, հիստերիա, վախեր, խուճապ, չենթարկվել, միջանձնային խանգարումներ, կոնֆլիկտայնություն, վատ առաջադիմություն, ֆոբիա, աուտիզմ, հոգեբանական-ֆիզիկական զարգացման ուշացում:

Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+37411512253 կամ +37443339819**

## *ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ*

Սիրով տեղեկացնում ենք, որ Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան Յունիսեֆ Հայաստանի հետ համագործակցության շրջանակներում սկսում է իրականացնել խորհրդատվական-ուղղորդող հանդիպումներ/թեժ գծի շրջանակներում իրականացնել խորհրդատվական հանդիպումներ Արցախից տեղահանված և պատերազմի արդյունքում տուժած երեխաների և նրանց ընտանիքների համար:

Հանդիպումների նպատակն է ուղղորդել ծնողներին երեխաների հետ աշխատանքում, տալ այն հիմնական ուղղորդումները հետագա հոգեբանական աշխատանքի հետ կապված: Հանդիպումները լինելու են առցանց: Յուրաքանչյոր հանդիպման տևողությունը 30 րոպե

Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+374 97 291 317**

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

revival.am
Հիմնադրամը աջակցում է մարդկանց անձնային և հոգևոր աճի ճանապարհին՝ օգնելով հաղթահարել դժվարությունները, շարժվել դեպի հոգևոր և հոգեբանական ամոքում, և զորանալ՝ հենվելով ազգային արմատների վրա:

Հիմնադրամի ծրագրերը ճանապարհ են հարթում հետտրավմատիկ վերականգնման համար՝ աջակցելով հաղթահարել հետպատերազմական և այլ աղետների հետևանքով առաջացած հոգեբանական դժվարությունները: Մոտ երեք ամիս տևողությամբ վերականգնման «հայկական ճանապարհը» առաջարկում է հոգևոր-հոգեբանական աջակցության երեք ձևաչափ՝ կախված մասնակիցների հոգեկան առողջության կարիքներից:
Ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ է միանալ հիմնադրամի մեծ համայնքին: Դրա համար առաջարկվում է լրացնել հոգեբանական թեստ, պատասխանել մի քանի հարցի և տրամադրել կոնտակտային տվյալներ:

Հիմնադրամի ծրագրերին մասնակից դառնալու համար անցեք հղումով՝ revival.am/help

## «ԱՐԵՒԱՄԱՆՈՒԿ» ՀՈԳԵԲԱՆԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Սիրով տեղեկացնում ենք, որ «Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամը կրկին վերսկսում է խմբային ձևաչափով «Տոկունության բարձրացման» հանդիպումները Արցախից տեղահանված և 44 օրյա պատերազմի պատճառով տուժած երեխաների ու դեռահասների համար:

Այն երեխաներին ու դեռահասներին հնարավորություն կտա ճանաչել և բացահայտել ներքին ռեսուրսները և դրանց միջոցով հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները:

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## «ԱՐԵՒԱՄԱՆՈՒԿ» ՀՈԳԵԲԱՆԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Մեր նպատակն է՝**

- Օգնել երեխաներին և դեռահասներին բացահայտել ներքին ռեսուրսները:
- Հաղթահարել դժվարությունները, որոնց բախվել են՝ տարբեր իրավիճակներում:
- Օգնել գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները
- Կարողանալ կառավարել իրենց հույզերն ու զգացմունքները:
- Նպաստել անձնային աճին և ինքնազարգացմանը:

«Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամը Գյումրի քաղաքում՝ Շիրակի մարզի սրտում:

Կապ հաստատելու համար զանգահարեք՝ **+374 93 159 470**

## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԷՍՏՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Փախստականների հարցերով էստոնական խորհուրդը մեկնարկում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց համար ինքնօգնության խմբերի ձևավորման ծրագիրը: Խմբային թեմատիկ հանդիպումների ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան՝

- Ձեռք բերել կենսապահովմանն ուղղված հմտություններ
- Բարելավել հոգեկան բարեկեցությունը
- Նպաստել անձնական զարգացմանը
- Սկսել կենսապահովման նախաձեռնություն

Խմբերը կձևավորվեն ՀՀ այն համայնքներում, որտեղ առնվազն 10 հոգի կցուցաբերեն հետաքրքրվածություն:

Հանդիպումների ընթացքում կտրամադրվի երեխաների համար անվճար խնամք:

Մանրամասներին ծանոթանալու համար՝ https://shorturl.at/hwaiN